Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

336.2
Հ-11

Հաստատում եմ
կոլեգիայի անդամ Քևքիկյան
1931 թ. սեպտեմբեր 23-ին.

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

1931 թ. «ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ» ՈՐԵՆՔԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ.

§ 1. Գյուղում կամ ամառանոցային ավաններում բնակվող քաղաքացիներն իրավունք ունեն վարձով կալացնելու ինքնահարկում կատարելու մասին հատուկ նշանակություն ունեցող կուլտուրական և տնտեսական կարիքները բավարարելու համար:

Ծանոթություն.— 1. Ինքնահարկում կիրառելու մասին վորոշում կալացնելու իրավունք և վերապահվում նաև Դիլիջանի, Ստեփանավանի, Նոր-Բայազետի, Գորիսի և Վաղարշապատի քաղաքների բնակչության, գյուղական այլ վայրերի համար սահմանված ընդհանուր հիմունքներով:

Ծանոթություն.—2. Ամառանոցային վայրերում ժամանակավորապես ամարային սեզոնի ընթացքում սենյակներ, տներ և բնակարաններ վարձով քաղաքացիները ինքնահարկման ենթա-

ՀԱՍՀ — ССРА
им. А. Мясникяна
Մասնադիցյան Անվան

15013-57

18.02.2014
27599

կա չեն, եթե նրանց մշտական բնակատեղը գտնվում է քաղաքներում:

§ 2. Ինքնահարկումը կարող է կատարվել ոչ միայն գյուղի ընտրական իրավունքով ողողող, ինքնահարկմանը մասնակցող քաղաքացիների ընդհանուր ժողովի վորոշմամբ:

Ինքնահարկում սահմանելու համար ընդհանուր ժողովում պետք է ներկա լինեն ոչ պակաս գյուղի խորհուրդների ընտրական իրավունքով ողողող քաղաքացիների ընդհանուր թվի կեսից վոչ պակաս մասը:

Եթե պահանջվող այդ թվով քաղաքացիները ներկա չլինեն ժողովում, այդ դեպքում հրավիրվում է ընդհանուր ժողով յերկրորդ անգամ, վորը համարվում է իրավասու, յերբ ներկա կեն լինում վերև հիշված քաղաքացիների մեկ յերրորդից վոչ պակաս մասը:

Ինքնահարկում սահմանելու վորոշումը ընդունվում է ներկա յեղող քաղաքացիների ձայների մեծամասնությամբ և ընդունված վորոշումը պարտադիր է դառնում բոլորի համար:

§ 3. Քաղաքացիների ընդհանուր ժողովի վորոշումը ինքնահարկման մասին, գյուղխորհուրդը իր յեղրակացությամբ ներկայացնում է Շրջգործկոմին ի քննության:

Եթե 10 որվա ընթացքում Շրջգործկոմը չի հայտնում գյուղխորհրդի վորոշումը բեկանելու մասին, ապա այդ վորոշումը համարվում է ուժի մեջ մտած և պարտադիր է տվյալ

17 FEB 2010

գյուղի բոլոր քաղաքացիների համար, անկախ այն բանից մասնակցե՞լ են նրանք գյուղի ընդհանուր ժողովում թե՞ վոչ:

Քաղաքացիների ընդհանուր ժողովի վորոշումը ինքնահարկման մասին, չբջանային գործադիր կոմիտեն կարող է բեկանել այն դեպքերում, յերբ այդ վորոշումը խախտում է գյուղի բնակչության ինքնահարկման օրենքը:

2. ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄԸ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 4. Ինքնահարկում կիրառելու խնդիրը կարող է դրվել քաղաքացիների ընդհանուր ժողովի քննության, գյուղխորհրդի, հասարակական կազմակերպությունների ինչպես և անհատական աշխատավորական նախաձեռնության և քաղաքացիների առանձին խմբերի նախաձեռնությամբ:

§ 5. Նախքան ինքնահարկում կիրառելու խնդիրը քաղաքացիների ընդհանուր ժողովի քննության հանձնելը, գյուղխորհուրդը կոմունտեսականների, չքավորության բատրակների և գյուղի ակտիվի մասնակցությամբ նախագծում են այն ձեռնարկումները, վորոնք պետք է իրագործվեն ինքնահարկման միջոցով և կազմում են այդ ձեռնարկումների իրագործման հետ, կապված ծախքերի նախնական նախահաշիվը:

4618—2.

Ինքնահարկման միջոցներով մի քանի գյուղերի ընդհանուր կարիքները (ձեռնարկում, ները) նախագծում և Շրջանային Գործադիր Կոմիտեն, յեթե այդ գյուղերը չեն միացված մեկ ընդհանուր խորհրդով։

§ 6. Յեթե ինքնահարկման կարգով դանձված դումարները ծախսվում են մի քանի գյուղերի ընդհանուր կարիքները բավարարելու համար, ինքնահարկում կատարելու խնդիրը վորոշում և ամեն մի գյուղի ընդհանուր ժողովը, անկախ նրանից, միացված են այդ գյուղերը մեկ խորհրդով, կամ նրանցից յուրաքանչյուրն ունի իր խորհուրդը։

Մոտ տարածության վրա գտնվող փոքր գյուղերում ընդհանուր կարիքների համար ինքնահարկում սահմանելու խնդիրը կարող և վորոշվել քաղաքացիների միջգյուղյան ընդհանուր ժողովներում։

Մեծ քանակության բնակչություն ունեցող խոշոր գյուղերում ընդհանուր կարիքների համար ինքնահարկում կատարելու հարցը կարող և դրվել գյուղի առանձին մասերի ժողովներում, ըստ թաղերի, շրջանների և այլն։

3. ԻՆՔՆԱՀԱՐԿՈՒՄԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 7. Գյուղի ընդհանուր ժողովների վորոշման մասին կազմվում և հատուկ արձանագրություն յերկու օրինակից (արձանագրության տպագրված ձևերը ուղարկված են շրջաններին)։

Արձանագրության մեկ օրինակը ուղարկվում և շրջանային գործկոմին, իսկ մյուսը՝ մնում և գյուղխորհրդի գործերում։

§ 8. Ինքնահարկման վերաբերյալ կայացրած գյուղի ընդհանուր վորոշման մեջ պետք և անպայման մատնանշված լինի՝

ա) այն նպատակը և ձեռնարկումը, վորի համար կատարվում և ինքնահարկում.

բ) ինքնահարկման գումարը։

Ծանոթություն.— 1. Ինքնահարկման գումարը գյուղի ընդհանուր ժողովի վորոշման արձանագրության մեջ ցույց և տրվում հետեվյալ ձևով.

1) Տվյալ նպատակը իրագործելու համար 1931 թ. անհրաժեշտ ինքնահարկի ընդհանուր գումարը (ընդունված գումարը).

2) Միասնական գյուղհարկ վճարող տնտեսությունների ինքնահարկմանը մասնակցելու չափը այսինքն՝ ցույց և տրվում՝ թե գյուղհարկ վճարող միջակ տնտեսությունները իրենց գյուղհարկի վո՞ր տոկոսը պետք և վճարեն վորպես ինքնահարկ։

Ծանոթություն.—2. Ինքնահարկի ընդհանուր գումարը արձանագրության մեջ ցույց և տրվում տվյալ ձեռնարկման նախնական նախահաշվով վորոշված գումարի համեմատ.

դ) ինքնահարկման վճարման ժամկետները.

§ 9. Ինքնահարկումը ընդհանուր ժողովների վորոշմամբ կարող է կատարվել ինչպես դրամով, նույնպես և բնականով (բնաբերքով):

Ծանոթություն.—Ինքնահարկման կատարելու ձևը (դրամով, բնականով և այլն) անպայման մատնանշվում է գյուղի ընդհանուր ժողովի վորոշման մասին կազմած արձանագրության մեջ:

5. ԻՆՉՊԻՍԻ՞ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ Ե ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ԻՆՔՆԱՀԱՐԿՈՒՄ

§ 1. Ինքնահարկումը թույլատրվում է կիրառել մեկ կամ մի քանի գյուղերի բացառապես կուլտուրական և տնտեսական հետևյալ կարիքները բավարարելու համար՝

ա) կուլտուր-կրթական, առողջապահական, ինչպես և գյուղատնտեսության բարձրացմանը նպաստող հիմնարկությունների (դպրոցներ, դրադարաններ, խրճիթ-ընթերցարաններ, ակումբներ, ժողովրդական տներ, մանկապարտեզներ, մանկական մսուրներ, հիվանդանոցներ բժշկական, բուժական, անասնաբուժական և ապրոկայաններ, մթերապահեստներ և այլն) կառուցման և տնտեսապես ապահովելու համար:

Ծանոթություն.—§ 10-ում թված նպատակներով ինքնահարկման կարգով

պահանջվող գումարները գյուղի ընդհանուր ժողովների վորոշմամբ կարող են ոգտագործվել հետևյալ կարիքների համար՝

1) նոր հիմնարկությունների (դպրոցների, խրճիթների և այլն) կառուցման համար.

2) անցյալ տարիներից մնացած կիսավարտ հիմնարկություններն ավարտելու համար.

3) հիմնարկությունների հիմնական և ընթացիկ նորոգում կատարելու համար.

4) հիմնարկությունների չենքերը և գույքը վարձակալելու համար.

5) հիմնարկությունները կահավորելու համար.

6) հիմնարկությունները տաքացնելու, լուսավորելու և այլ տնտեսական կարիքներ բավարարելու համար.

7) կուլտուր-լուսավորական հիմնարկությունների անձնակազմի աշխատավարձը վճարելու համար:

բ) Ճանապարհային շինարարության համար (հասարակական նշանակություն ունեցող գյուղական, ինչպես և դաշտային ճանապարհների, կամուրջների, գետանցքների կառուցում, վերանորոգում և ապահովություն):

Ծանոթություն.— Ինքնահարկման կարգով կատարվող ճանապարհային

ջրատնտեսական շինարարությունը չի ազատում գյուղական բնակչությանը այն պարհակային աշխատանքներից, որոնք նախատեսված են ճանապարհային և ջրատնտեսական շինարարության օրենքներով:

գ) Հակահրդեհային պահպանության համար (հրդեհաշեջ դեպոների ու սրահների կառուցում, սարքավորում, պահպանություն և ապահարկություն):

դ) Գյուղի բարեկարգության համար (ջրհորների, քահրիզների, ջրմուղու, հանրային աղբյուրների, լճակների և այլ ջրամբարների, հրապարակների, փողոցների, բաղնիքների, անասունները թաղելու վայրերի կառուցում, բարեկարգ պահպանություն, ճահիճների չորացում և այլն):

ե) Ռադիոֆիկացիայի և էլեկտրոֆիկացիայի համար:

Ծանոթություն.— Էլեկտրոֆիկացիայի վերաբերյալ հարցերը նախապես համաձայնեցվում են շրջանային գործադիր կոմիտեների հետ:

§ 11. Մի՛անգամյա արդելվում է ինքնահարկման գումարների ոգտագործումը վարչական ծախքերը ծածկելու համար, ինչպես օրինակ՝ իշխանության տեղական մարմինների վարձատրության, այդ մարմինների շենքերի պահպանման կամ սարքավորման, ինչպես և այլ վարչական ծախքերը ծածկելու համար:

6. ԻՆՉՊԻՍԻ՞ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԿԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԵՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆԸ

§ 12. Ինքնահարկմանը մասնակցում են՝

ա) այն կոլտնտեսականները, որոնք ունեն չհանրայնացված յեկամտի աղբյուրներ.

բ) անհատական գյուղացիական տնտեսությունները.

գ) ավյալ գյուղում մշտապես բնակվող քաղաքացիները նույնիսկ այն դեպքերում, յերբ նրանք չեն վարում գյուղական տնտեսություն.

§ 13. Այն կոլտնտեսականները, որոնք չունեն չհանրայնացված յեկամտի աղբյուրներ, ինքնահարկմանը չեն մասնակցում:

§ 14. Ինքնահարկմանը չեն մասնակցում նաև կոմունանները, կոլեկտիվ տնտեսությունները և գյուղատնտեսական մշակող այն կերպարությունները, որոնք հանրայնացրել են հողերը և գյուղատնտեսական գույքը:

7. ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 15. Այն կոլտնտեսականները (կոլտնտեսության անդամները), որոնք ունեն չը հանրայնացրած յեկամտի աղբյուրներ և վարձատրում են մի՛ասնական գյուղհարկ, ինքնահարկի չեն յենթարկվում 6 ռ. մինչեվ 12 ռ.:

§ 16. Այն կոլտնտեսականները, որոնք

ունեն չհանրայնացրած յեկամտի աղբյուրները, սակայն 1931 թվին ազատված են գյուղհարկից, ինքնահարկ են վճարում 4 ռ. մինչև 8 ռ.:

Ծանոթություն.—կոլտնտեսականների չհանրայնացրած յեկամտի աղբյուրներ են համարվում ինչպես գյուղհարկի յենթակա յեկամուտների աղբյուրները (ցանք, անասուններ, գյուղատնտեսական հատուկ ճյուղեր) նույնպես եվ գյուղհարկից ազատվող աղբյուրները (խողաբուծություն, թըռչնաբուծություն, մեղվաբուծություն և այլն):

Ծանոթություն.— Գյուղխորհուրդներին իրավունք է վերապահվում առանձին դեպքերում ազատել ինքնահարկումից այն կոլտնտեսականներին, վորոնց չհանրայնացրած յեկամուտները հարկված չեն միասնական գյուղհարկով:

§ 16ա. Չհանրայնացրված յեկամտի աղբյուրներ ունեցող կոլտնտեսականներին և գյուղհարկ չվճարող սակավազոր անհատական տնտեսություններին ինքնահարկումից ազատելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել կարմիր բանակայինների, աշխատանքի և պատերազմի հաշմանդամների այն տնտեսությունների վրա, վորոնք լրիվ, կամ մասնակի չափով ազատված են գյուղհարկից:

Շրջանային գործկոմները պետք է առնեն առանձին հսկողություն գյուղխորհուրդների այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների վրա և ապահովեն գատակարգային ճիշտ դիծը ինքնահարկում կիրառելու գործում:

§ 17. Այն տնտեսությունները, վորոնք մտել են կոլտնտեսության մեջ, միասնական գյուղհարկի յենթակա յեկամուտների աղբյուրների հաշվառումից հետո, սակայն մինչեվ տվյալ գյուղի ինքնահարկման ձեվակերպելը, ինքնահարկ են վճարում կոլտնտեսականների համար սահմանված չափերով:

Որինակ՝ գյուղացին կոլտնտեսության մեջ է մտել ոգոստոս ամսում—գյուղհարկի հաշվառումից հետո, սակայն ինքնահարկման կամպանիայից առաջ, յերբ դեռ տվյալ գյուղում ինքնահարկումը ձեվակերպված չե յղել: Այդ գյուղացին ինքնահարկ պիտի վճարի կոլտնտեսականների հետ հավասար հիմունքներով:

Յեթե այդ գյուղացին մտնի կոլտնտեսության մեջ ինքնահարկումը տվյալ գյուղում ձեվակերպվելուց հետո, նա ինքնահարկ պիտի վճարի, վորպես անհատական աշխատավորական տնտեսություն, իր գյուղհարկի համեմատ:

§ 18. Այն անհատական աշխատավորական տնտեսությունները, վորոնք յենթարկված են միասնական գյուղհարկի, ինքնահար-

կի և վճարում են 1931 թվից գյուղհարկի 50 տոկոսից մինչեվ 100 տոկոսի սահմաններում:

Ծուրաքանչյուր անհատական աշխատավորական տնտեսության ինքնահարկի դրույքը վորոշում և նրա գյուղհարկի դրույքի համեմատ և այն տոկոսով, վոր սահմանում և գյուղի ընդհանուր ժողովը:

Որինակ՝ գյուղի ընդհանուր ժողովը վորոշել և գյուղհարկ վճարող տնտեսություններից ինքնահարկ գանձել գյուղհարկի 75 տոկոսի չափով:

Ցեթե տվյալ տնտեսության գյուղհարկը հավասար և 100 ռ., ապա նա այս դեպքում ինքնահարկ պիտի վճարի 75 ռուբլի:

§ 19. Կուլակային տնտեսությունները ինքնահարկ են վճարում 1931 թ. միասնական գյուղհարկի 100 տոկոսի չափով:

§ 20. Միասնական գյուղհարկից 1931 թվին սակավազորության հետեվանքով ազատված տնտեսությունները ինքնահարկ են վճարում 6 ռ. մինչեվ 10 ռ.:

Գյուղխորհուրդներին իրավունք և վերապահվում առանձին դեպքերում լրիվ կամ մասնակի չափով սակավազոր տնտեսություններին ազատել ինքնահարկումից, դեկավարվելով այս հրահանգի § 16-ում սահմանված սկզբունքներով:

§ 21. Գյուղական վայրերում բնակվող վոչ կոոպերացված արհեստավորները և տնայնագործները, վորոնք չունեն գյուղատնտեսական

հող. յեկամուտները, ինքնահարկի յեն յենթարկվում նրանց կողմից վճարվող յեկամտային հարկի այն տոկոսի չափով, վորպիսին սահմանված և ընդհանուր ժողովի վորոշմամբ գյուղհարկ վճարող անհատական աշխատավորական գյուղացիական տնտեսությունների համար:

Որինակ՝ վոչ կոոպերացված տնայնագործը չունի գյուղական տնտեսություն և յենթարկված չե գյուղհարկի, իրեն յեկամուտների համեմատ նա վճարում և յեկամտային հարկ 50 ռ.:

Տվյալ գյուղում, վորտեղ բնակվում և այդ տնայնագործը, մյուս գյուղացիական տնտեսությունները գյուղի ընդհանուր ժողովի վորոշմամբ ինքնահարկ պիտի վճարեն դեցուք գյուղ հարկի 75 տոկոսի չափով:

Այդ տնայնագործը պետք և վճարի իր յեկամտահարկի 75 տոկոսը, վորպես ինքնահարկ, այսինքն՝ նրա ինքնահարկի դրույքը պիտի հավասար լինի 37 ռ. 50 կոպ.:

§ 22. Վոչ կոոպերացված տնայնագործների և արհեստավորների ինքնահարկի դրույքը վորոշվում և 1930 թվի հաստուկ յեռամսյակի (հոկտեմբեր—դեկտեմբեր) յեկամտահարկի քառապատկված գումարի համեմատ (յեռամսյակի յեկամտահարկը հավասարեցված և մեկ տարվա յեկամտահարկին):

Որինակ՝ տնայնագործը յեկամտահարկ և

վճարել 1930 թվի հատուկ յեռամսյակում 20 ռ., նրա մեկ տարվա յեկամտահարկը հավասար է 20 ռ. չորս անգամ = 80 ռ. վերջին դրամարկ, այսինքն՝ 80 ռ. համեմատ պիտի հաշվել և գանձել ինքնահարկը:

§ 23. Յեկամտահարկի չհարկվող մինիմումով յեկամտահարկից ազատված արհեստավորները և անձնագործները ինքնահարկ են վճարում 6 ռ. մինչեվ 10 ռուբլի:

§ 24. Վոչ աշխատավորական յեկամուտներ ունեցող քաղաքացիները, վորոնք չունեն գյուղական տնտեսություն և հարկված են յեկամտահարկով կամ ազատված են յեկամտահարկից, ինքնահարկ են վճարում այն դրամարկ 100 տոկոսի չափով, վոր կստացվեր նրանցից յեթե նրանք հարկվեյին իրենց յեկամուտների համեմատ միասնական գյուղհարկով:

Որինակ՝ վորևե քաղաքացի գյուղում ըստ բաղվում և առեվտրով և չի զբաղվում գյուղատնտեսությամբ: Իր առեվտրի յեկամտի համեմատ վճարում է յեկամտահարկ: Այդ առեվտրականը դիցուք ունեցել է 1930 թվին յեկամուտ 1500 ռ.: Վորպեսզի վորոշել ինքնահարկի չափը, 1500 ռ. յեկամտից պետք է հաշվել գյուղհարկ, վորը հավասար է 530 ռ. վերջին դրամարկի չափով, այսինքն՝ 530 պետք է վճարի այդ առեվտրականը ինքնահարկ: Գյուղհարկի պիտի հաշվել կոլեկտիվ տնտեսության դերակատարությամբ:

Ծանոթություն.— Այս հրահանգի § 24-ով սահմանված կարգը չի տարածվում կրոնական պաշտամունքի ծառայող անձանց վրա, վորոնք ինքնահարկ պիտի վճարեն իրենց գյուղհարկի կամ յեկամտահարկի չափերով:

Գյուղատնտեսություն չունեցող կրոնական պաշտամունքի ծառայողները ինքնահարկ պիտի վճարեն իրենց յեկամտահարկի սահմաններում:

§ 25. Գյուղական վայրերում բնակվող բանվորները և ծառայողները, ինչպես և կոոպերացված արհեստավորները և տնայնագործները, վորոնք չեն վարում գյուղական տնտեսություն, ինքնահարկը վճարում են կայուն դրույքներով, իրենց աշխատավարձի համեմատ, ըստ վորում՝

ա) Այն անձինք, վորոնց ամսական աշխատավարձը 30 ռ. ավելի չի, բոլորովին ազատվում են ինքնահարկումից:

բ) 30 ռ. ավելի, մինչև 75 ռ. ամսական աշխատավարձ ստացողները ինքնահարկ են վճարում 4 ռուբլի:

գ) 75 ռ. ավելի աշխատավարձ ստացողները ինքնահարկ են վճարում յեկամտահարկի 75 տոկոսի չափով:

Ծանոթություն.— Ամսական 75 ռ. ավելի աշխատավարձ ստացող բանվորների-ծառայողների ինքնահարկման չա-

փը վորոշվում է մեկ տարվա չեկամտահարկի տոկոսային հարաբերությամբ, հետևյալ կարգով՝

ա) վերցվում է վաստորեն վճարած չեկամտահարկի գումարը 1931 թ. հունվարի 1-ից մինչև ոգոստոսի 1-ը:

բ) մնացած 5 ամսվա (ոգոստոս-դեկտեմբեր) չեկամտահարկի գումարը վորոշվում է ոգոստոսի դրությամբ 5-ի վրա բազմապատկելու միջոցով:

Որինակ՝ բանվորը մինչև ոգոստոս ամիսը վճարել է 7 ռ.: Նրա ոգոստոս ամսի չեկամտահարկի դրույքը հավասար է դիցուկ 85 կ.: Այդ բանվորի մեկ տարվա չեկամտահարկը պիտի հավասար լինի՝ 85×5=4 ռ. 25 կ. + 7. =11 ռ. 25 կոպ.: Տարվա չեկամտահարկի 75 տոկոս նա պետք է վճարի վորպես ինքնահարկ: Տվյալ դեպքում ինքնահարկի գումարը կկազմի 8 ռ. 43 կ. (11 ռ. 25 կ. × 75: 100=8 ռ. 43 կոպ.):

§ 26. Գյուղխորհուրդներին իրավունք է վերապահվում ազատել ինքնահարկումից առանձին բանվորներին, ծառայողներին, կամ կոոպերացված տնայնագործներին:

8. ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 27. Ինքնահարկման գումարները գանձում է գյուղխորհուրդն այն ժամկետներում, վորպիսիք սահմանում են գյուղի ընդհանուր ժողովները:

Ինքնահարկման ապառքները գյուղխորհուրդը գանձում է նույն կարգով, վորպիսին սահմանված է միասնական գյուղհարկի համար. ժամանակին չմուծված ինքնահարկման գումարներից գանձվում է տույժ:

§ 28. Ինքնահարկման գանձված գումարները մուծվում են պետական խնայողական դրամարկղ:

§ 29. Ինքնահարկ վճարողների անձնական հաշիվները վարում է գյուղխորհուրդը:

9. ԲՈՂՈՔՆԵՐԸ ՅԵՎ ԳԱՆԳԱՏՆԵՐԸ ՏԱԼՈՒ ՅԵՎ ՓՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

§ 30. Ինքնահարկի վերաբերյալ գանգատները, բողոքները և միջնորդությունները տրվում են և քննություն են առնվում նույն ժամկետներում և նույն կարգով, վոր սահմանված են գյուղհարկի համար:

10. ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՈՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

§ 31. Ինքնահարկման կարգով գանձված գումարները մտցվում են գյուղխորհրդի բյուջեյի մեջ ըստ վորում անպայման պահպանվում է ինքնահարկման նպատակային բովանդակությունը: Բյուջեյի ծախքային մասում ճշգրիտ կերպով ցույց են տրվում այն ձեռնարկումները, վորոնց իրագործման համար գյուղի ընդհանուր ժողովի վորոշմամբ պետք է ծախսվեն

1787
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱԽԼ - ԵՐԵՎԱՆ
15013-57

ինքնահարկման կարգով հավաքված միջոցները։

§ 32. Գյուղական բյուջեի մեջ մտցվող ինքնահարկման միջոցները վոչ միայն պետք է ծախսվեն բացառապես գյուղի ընդհանուր ժողովի կողմից վորոշված նպատակի վրա, այլև անպայման պետք է հաշվի առնվեն տեղական բյուջեներով և առանձին հատվածներով։

§ 33. Մեկ խորհրդով չմիացված մի քանի գյուղերի ընդհանուր կարիքները բավարարելու նպատակով ինքնահարկման գանձված գումարները ծախսում են շրջանային գործադիր կոմիտեները։

§ 34. Ինքնահարկման կարգով գանձված այն միջոցները, վորոնք չեն ոգտագործվում տվյալ տարում, մտցվում են գյուղական հետևյալ տարվա բյուջեի մեջ և ծախսվում են այն նպատակների վրա, վորպիսիք մատնանշված են ընդհանուր ժողովների վորոշման մեջ։

§ 35. Ճիշտ և ժամանակին ինքնահարկման միջոցները ծախսելու վրա հսկողությունը իրագործվում է գյուղխորհուրդների և շրջանային գործադիր կոմիտեների վերատուգիչ հանձնաժողովների միջոցով։

§ 36. Ինքնահարկման միջոցներով կատարվող շինարարության վրա հսկողություն

ունենալու, տեխնիկապես ոժանդակելու, ինչպես և դիֆիցիտային շինանյութերով մատակարարելու պարտականությունը դրվում է Շրջանային Գործկոմների վրա։

ՀԱՐԿՄԱՆ ՅԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍԵԿՏՈՐ

Յերեվան

ՀՀ Ազգային գրադարան
NL0203496

27599

Ղահրեի Տպարան

Պատվեր 4613 Տպաքանակ 1000 (3) Տիրաժ 2000